### Ինչպես Կարող եք CCS-ի Հետ Կապվել, Որպեսզի Օգտվեք Ձեր Իրավունքներից

Եթե դուք ցանկանում եք օգտվել այս հայտարարության մեջ բացատրված ձեր մասնավոր իրավունքներից, ապա խնդրվում է զանգահարել կամ գրել ձեր բնակման երկրի CCS ծրագրին:  Գավառի ծրագրի հեռախոսի համարները նշված են ներդիրի մեջ:

### Բողոքելու համար

Եթե ձեզ թվում է, որ ձեր կամ ձեր երեխայի մասնավոր իրավունքները խախտվել են և ցանկանում եք բողոքել, ապա դուք կարող եք զանգահարել կամ գրել.

Privacy Officer
Department of Health Care Services
P.O. Box 997413
MS 0010
Sacramento, CA 95899-7413
(916) 445-4646
կամ (877) 735-2929 անվճար համարով

կամ

Secretary of the U.S. Department of Health and Human Services
Office for Civil Rights
Attention: Regional Manager
50 United Nations Plaza, Room 322
San Francisco, CA 94102

Լրացուցիչ տեղեկությունների համար, զանգահարեք:
(800) 368-1019
կամ
U.S. Office for Civil Rights at
(866) OCR-PRIV (866-627-7748)
կամ (866) 788-4989 անվճար համար



### Ոչ Մի Հակագործություն

CCS չի կարող ետ վերցնել երեխայի բժշկական նպաստը կամ ինչ-որ ձևով ձեզ վնաս հասցնել, եթե դուք դիմեք բողոքի կամ օգտագործեք այս հայտարարության մասնավոր իրավունքները:

### Գործող Ամսաթիվը

Այս Մասնավոր Իրավունքների Հայտարարությունը գործում է ապրիլի 14-ից, 2003թ.:

### Այս Հայտարարության Փոփոխությունները

CCS պետք է ենթարկվի այս Հայտարարության օրենքներին:  Սակայն CCS իրավունք ունի փոխել իր մասնավոր իրավունքները:  Եթե CCS որևիցե փոփոխություններ մտցնի, ապա ձեզ կտրվի նոր հայտարարությունը, եթե դուք  CCS ծրագրի մեջ եք:

### Հարցեր

Եթե ձեզ մոտ ինչ-որ հարցեր ծագեն այս Հայտարարության մասին և ցանկանաք ավելի շատ տեղեկություններ ստանալ, խնդրվում է դիմել Մասնավոր Պաշտոնակատարին՝ այս Հայտարարության մեջ նշված հասցեյով և հեռախոսի համարով:

---

**Այս հայտարարության կրկնօրինակը այլ լեզուներով, Braille-ով, խոշոր տառերով, լսաժապավենով կամ կոմպյուտերի դիսկով ստանալու համար, խնդրվում է զանգահարել կամ գրել Մասնավոր Պաշտոնակատարին այս հայտարարության մեջ նշված հեռախոսի համարով կամ հասցեյով:**

---



⋞⋞⋞ ԿԱՐԵՎՈՐ ⋟⋟⋟

ССS ՉՈՒՆԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԼՐԻՎ ԿՐԿՆՕՐԻՆԱԿՆԵՐԸ:
ԵԹԵ ԴՈՒՔ ՈՒԶՈՒՄ ԵՔ ՏԵՍՆԵԼ, ՍՏԱՆԱԼ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԸ, ԿԱՄ ՓՈԽԵԼ ԵՐԵԽԱՅԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԸ, ԽՆԴՐՎՈՒՄ Է ԴԻՄԵԼ ԵՐԵԽԱՅԻ ԲԺՇԿԻՆ ԿԱՄ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻՆ: ԵԹԵ ԵՐԵԽԱՆ ՈՒՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՊԱ ԱՅՆ ԿՈՒՆԵՆԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ: ԴԻՄԵՔ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆԸ ԿԱՄ ՁԵՌՔ ԲԵՐԵՔ ԱՅԴ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿՆԵՐԸ:



**Department of Health Care Services**

DHCS

# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (CCS) ԾՐԱԳՐԻՑ

# ՄԱՍՆԱՎՈՐ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

---

Այս հայտարարությունը նկարագրում է, թե ինչպես կարելի է օգտագործել և բացահայտել ձեր բժշկական տեղեկությունները և ինչպես կարող եք այն ստանալ:

**ԽՆԴՐՎՈՒՄ Է ՈՒՇԱԴԻՐ ՍՏՈՒԳԵԼ:**

---

CCS Ծրագիրը պետք է առանձին պահի ծրագրի երեխաների բժշկական տեղեկությունները: Սա ներառնում է CCS և անձնական բժշկական տեղեկությունների իրավունքը: CCS պետք է տա ձեզ այս հայտարարությունը և հայտնի ձեզ, թե ինչպես CCS կարող է օգտատործել և հանձնել կամ "բացահայտել" ծրագրի երեխաների մասին տեղեկությունները:

## Ինչպես CCS Կարող է Օգտագործել և Կիսվել Ձեր Տեղեկություններով

Երեխայի անունը, հասցեն, երեխայի մասին անձնական տեղեկությունները, բժշկական անցյալը և երեխային բժշկական ծառայությունները կատարված CCS-ի կողմից կօգտագործվեն և կկիսվեն հիմնականում CCS ծրագրի գործողությունների հետ կապված պատճառներով: Այս պատճառները կընդգրկեն.

- CCS նպաստի իրավունքի որոշումը:
- Այն հաշիվների որոշումը, որ դուք հնարավոր է, որ մուծեք CCS նպաստը ստանալու համար:
- Պարզել, թե երեխան իրավունք ունի Medi-Cal կամ Healthy Families և, թե դուք ունեք մասնավոր ապահովագրություն:
- **Բուժման համար.** Հաստատել ծառայություններ երեխայի քննման, բուժման և տերապիայի համար: CCS կարող է նախօրոք հաստատել բժշկական ծառայությունները: Հաստատություն տալու համար՝ CCS կարող է այլ անձանցից տեղեկություններ ստանալ կամ կիսվել այդ տեղեկությունները այլոց հետ, ովքեր խնամում են երեխային, որպեսզի երեխաները իրենց անհրաժեշտ ծառայությունները ստանան:
- **Վճարման համար.** CCS և այլ անձիք, ովքեր աշխատում են մեզ հետ, ստանում են, ստուգում, ի աստատում և վճարում բժշկական հաշիվները՝ բժիշկներից կամ այլ առողջություն մատակարարողներից: CCS կարող է կիսվել բժշկական տեղեկությունները այս բժիշկների կամ այլ մատակարարողների հետ, որոնք հաշիվ են ուղարկում CCS-ին: CCS կարող է ուղարկել իր ստացած որոշ հաշիվները այլ ապահովագրություններին կամ խմբերին, որոնք կարող են վճարել երեխայի ստացած ծառայությունների համար:
- **Բժշկական գործողությունների համար.** CCS կարող է օգտագործել փաստեր երեխայի առողջության և բուժման մասին, որպեսզի երեխաները բարձր որակի բուժում ստանան: CCS նաև կարող է օգտագործել այս տեղեկությունները բժիշկների կամ այլ առողջություն մատակարարողների ստուգումների կամ կեղծիքի հետաքննությունների ժամանակ, կամ CCS ծրագրի պլանավորման և ղեկավարման համար:

## Երեխաների Բժշկական Տեղեկությունների Օգտագործման Այլ Միջոցներ

CCS կարող է նաև օգտագործել կամ տեղեկություններ տալ երեխայի CCS իրավունքի և այլ անձնական բժշկական տեղեկությունների մասին հետևյալ պատճառներով.

- Զանգահարելով կամ գրելով ձեզ ձեր երեխայի CCS նպաստի մասին:
- երեխայի ընտանիքի անդամներին, որպեսզի օգնեն բուժման կամ ծառայությունների վճարման համար:
- Իրավական պատճառներով, ինչպիսիք է դատական հրամանին ենթարկվելը:
- հետազոտական ուսումնասիրությունների համար, որոնք համապատասխանում են մասնավոր օրենքի պահանջներին, ինչպիսիք է ուսումնասիրությունը հիվանդությունների կանխման մասին:
- Տեղեկություններ հավաքելու համար, որոնք այլևս կապված չեն երեխայի հետ, օրինակ, թե ինչպես են տարբեր CCS բժշկական պրոբլեմները պատահում բոլոր CCS երեխաների հետ:
- Օրենքով պարտադրված պատճառներով, որոնք կարող են ստիպել կիսվել երեխայի բժշկական տեղեկություններով:

CCS կարող է բժշկական տեղեկություններ տալ այս ծրագրին օգնող այլ կազմակերպություններին, ինչպիսիք են CCS-ի հաշիվները վճարող կազմակերպությունները: Եթե CCS տա այս տեղեկությունները, ապա այնպես կանի, որ այդ կազմակերպությունները պաշտպանեն մեր տված տեղեկությունների մասնավորությունը:

Որոշ նահանգային օրենքներ սահմանափակում են տեղեկությունների վերոհիշյալ օգտագործումը: Օրինակ, գոյություն ունեն հատուկ օրենքներ, որոնք պաշտպանում են տեղեկությունները HIV/AIDS-ի, հոգեկան բուժման, զարգացողական հաշմանդամության և թմրամոլության ու ալկոհոլի չարաշահման մասին: CCS կենթարկվի այս օրենքներին:

**ՆՇՈՒՄ**

ԵԹԵ ԵՐԵԽԱՆ MEDI-CAL-Ի ՀԻՎԱՆԴ Է, ՕՐԵՆՔԸ ԿԱՐՈՂ Է ԹՈՒՅԼ ՉՏԱԼ ՈՐՈՇ ՎԵՐՈՀԻՇՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ: MEDI-CAL-Ի ՕՐԵՆՔՆԵՐԸ ԱՍՈՒՄ ԵՆ, ՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԵԼԻ Է ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՄԻԱՅՆ MEDI-CAL ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ:

## Երբ Անհրաժեշտ է Գրավոր Թույլտվություն

CCS պետք է ունենա գրավոր թույլտվություն ծնողից, խնամակալից կամ մենակ ապրող երեխաներից նախքան կիսվելը այդ տեղեկություններով և CCS-ի իրավունքներով՝ չնշված այս հայտարարության մեջ: Եթե դուք տաք CCS-ին գրավոր թույլտվություն օգտագործել կամ կիսվել ձեր երեխայի տեղեկություններով, դուք ցանկացած ժամանակ կարող եք ետ վերցնել այդ իրավունքը:

## Ձեր Մասնավոր Իրավունքները

Ըստ օրենքի դուք իրավունք ունեք.

- Տեսնել երեխայի անձնական բժշկական տեղեկությունները և կրկնօրինակը ստանալ, որը գտնվում է CCS-ում:
- Փոխել երեխայի անձնական բժշկական տեղեկությունները, եթե դուք գտնում եք, որ նրանք սխալ են կամ պակասություն ունեն և եթե CCS համաձայնվի: Եթե CCS չհամաձայնվի, ապա դուք կարող եք նամակ ավելացնել երեխայի բժշկական գործին՝ բացատրելով, թե ինչու համաձայն չեք:
- Այն մարդկանց ցուցակը ձեռք բերել, ովքեր ստանում են երեխայի անձնական բժշկական տեղեկությունները CCS-ից: Այս ցուցակը ցույց չի տա, որ երեխայի անձնական բժշկական տեղեկությունները տրվել են երեխայի ծնողին, խնամակալին կամ մենակ ապրող երեխաներին, կամ երբ են տեղեկությունները կիսվել բուժման, վճարման կամ բժշկական գործողությունների համար:
- Խնդրել CCS-ին հաղորդակցվել ձեզ հետ այլ միջոցով կամ օրինակ նյութերն ուղարկել ձեզ փոստարկղի հասցեյով՝ ձեր տան հասցեի փոխարեն:
- Խնդրել CCS-ին սահմանափակել, թե ինչպես է ձեր երեխայի անձնական բժշկական տեղեկությունները օգտագործվում կամ ուղարկվում: Սակայն CCS կարող է չհամաձայնվել ձեր խնդրանքի հետ:
- Դուք իրավունք ունեք ստանալ այս Մասնավոր Իրավունքների Հայտարարության թղթային կրկնօրինակը: Այս Հայտարարությունը կարելի է ձեռք բերել նաև CCS-ի ինտերնետի էջում, WWW.DHCS.CA.GOV/SERVICES/CCS.